## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 566072


« 28 » փետրվարի 2025 թ.

№ ՄՇ/34.2-Մ2-9/933-2025

***Անհատ ձեռնարկատեր***
***Արման Այվազի Գևորգյանին***

Հարգելի պարոն Գևորգյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2024 թվականի դեկտեմբերի 26-ի և 2025 թվականի փետրվարի 27-ի գրություններով (պատճենները կցվում են) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին տեղեկացրել է, որ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի №139 հասցեում («ԲՈՒՆԿԵՐ ՓԱԲ»), որտեղ գործունեություն է իրականացնում Ա/Ձ Արման Գևորգյանը, հայտնաբերվել է առանց թույլտվության 902,5-915,0ՄՀց և 1935-1950ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներում շահագործվող բջջային կապի վերահաղորդակ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 60-րդ հոդվածը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը նախատեսում է քննարկել Ձեր կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը դադարեցնելու հարցը:

Անհրաժեշտ է 7-օրյա ժամկետում ներկայացնել նշված հարցի կապակցությամբ Ձեր պարզաբանումները:

Առդիր՝ 12 էջ:

***Ս. Շահինյան***

2/28/2025

X

ՍԵԴԱ ՇԱՀԻՆՅԱՆ

Կատարող՝ Սիրանուշ Ղարախանյան ☎ 015 58 08 08 (124)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

**N 01/11.1/10836-2024**

«…..»…………………2024թ.

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Մեսրոպյան**,

Ի լրումն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի օգոստոսի 8-ի թիվ 01/11.1/6761-2024 գրության՝ տեղեկացնում եմ, որ սույն թվականի դեկտեմբերի 9-ից 10-ը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» (այսուհետ՝ «ՀՀԿ») ՊՈԱԿ-ի մասնագետները ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաք գործուղման ընթացքում, Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի շրջակայքում տեղակայված «Վիվա Արմենիա» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բջջային կապի «GYU025» բազային կայանի մոտակայքում իրականացրել են 900 ՄՀց և 1800 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումներ և ուղղորոշման աշխատանքներ:

Արդյունքում, Գյումրի քաղաքի Աբովյան 139 հասցեում գործող «ՓԱԲ ԲՈՒՆԿԵՐ» կազմակերպության (տնօրեն՝ Ռոման Միրզոյան, աշխատակից՝ Արման Գևորգյան բջջ. հեռ. 098-13-15-53) կողմից շահագործվող բջջային կապի վերահաղորդակից արձանագրվել են կողմնակի ազդանշաններ:

Վերահաղորդակը մի քանի րոպե անջատելու ընթացքում, Ընկերության կողմից «ՀՀԿ» ՊՈԱԿ-ին բանավոր ներկայացված տեղեկատվության համաձայն՝ բջջային կապի «GYU025» բազայի կայանի խանգարումները նվազել են խանգարումների փնտրման աշխատանքները հնարավոր է միայն վերահաղորդակի աշխատանքը դադարեցնելուց հետո:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@hti.am

Վերահաղորդակի շահագործման անթույլատրելիության մասին կազմվել է համապատասխան արձանագրություն, սակայն շահագործողը հրաժարվել է ստորագրել, պատճառաբանելով՝ որ վերահաղորդակը տեղադրվել է տարածքի սեփականատիրոջ կողմից և այն անջատելու իրավունքը վերապահված է նրան, սակայն սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկատվություններ չեն տրամադրվել:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ կադաստրի կոմիտե և ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ համապատասխանաբար Գյումրի քաղաքի Աբովյան 139 հասցեում «ՓԱԲ ԲՈՒՆԿԵՐ» կազմակերպության նկատմամբ իրավունքի պետական գրանցման առկայությունը, ինչպես նաև գործունեություն իրականացնող իրավաբանական անձի վերաբերյալ առկա տեղեկատվությունը ճշտելու նպատակով:

Կից ներկայացվում են սպեկտրագրամաններրի և արձանագրության պատճենները:

Առդիր՝ 5 թերթ:

12/25/2024

X 

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047 **ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ կապի և փոստի վարչության կապի բաժին
Լուսինե Հակոբյան հեռ.՝ 010 59 00 65

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1209

Պարոն՝ ԱՁ Արման Գևորգյան, [illegible]

«9» 12 2024 թ. ՀՀԿ ՊՌԱԿ ներկայացուցիչների կողմից կատարվել է հետազոտում, որի արդյունքներից պարզվել է հետևյալը Գ. Գյումրի, Անկախության 139 հասցեում Ձեր կողմից շահագործվող բջջային կապի ուժեղարարը, որը խանգարում է պատկանող «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ին բջջային կապի համար հատկացված 902,5 ՄՀց - 915 ՄՀց; 1935-1950 ՄՀց հաճախականությունների տիրույթներում: Սարքի շահագործումը արգելված է:

(կազմողների Ա. Ա.)

[illegible]

[illegible]

(ստորագրություն)

Արձանագրության հետ ծանոթացա և ստացա՝ հրաժարվել են ստանալուց և ստորագրելուց

(պաշտոնը, Ա.Ա., ստորագրություն)

«9» 12 2024թ.

---

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1209

Պարոն՝ ԱՁ Արման Գևորգյան, [illegible]

«9» 12 2024 թ. ՀՀԿ ՊՌԱԿ ներկայացուցիչների կողմից կատարվել է հետազոտում, որի արդյունքներից պարզվել է հետևյալը Գ. Գյումրի, Անկախության 139 հասցեում Ձեր կողմից շահագործվող բջջային կապի ուժեղարարը, որը խանգարում է պատկանող «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ին բջջային կապի համար հատկացված 902,5 ՄՀց - 915 ՄՀց; 1935 ՄՀց - 1950 ՄՀց հաճախականությունների տիրույթներում: Սարքի շահագործումը արգելված է:

(կազմողների Ա. Ա.)

[illegible]

[illegible]

(ստորագրություն)

Արձանագրության հետ ծանոթացա և ստացա՝ հրաժարվել են ստանալուց և ստորագրելուց

(պաշտոնը, Ա.Ա., ստորագրություն)

«9» 12 202 թ.




ք.Գյումրի, Աբովյան 139 հասցեում, վերահաղորդակը անջատված




ք.Գյումրի, Աբովյան 139 հասցեում, վերահաղորդակը միացված




ք.Գյումրի, Աբովյան 139 հասցեում, վերահաղորդակը միացված




ք.Գյումրի, Աբովյան 139, վերահաղորդակը անջատված

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐ**

N 01/11.1/1647-2025

«.....» ............. 2025թ.

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Մեսրոպյան**,

Ի լրումն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի դեկտեմբերի 26-ի ի թիվ 01/11.1/10836-2024 գրության՝ Ձեզ եմ տրամադրում ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի, Աբովյան 139 հասցեում անշարժ գույքի միավորների և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի, Աբովյան 139 հասցեում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 խտացված նյութ:

2/27/2025

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047 **ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ կապի և փոստի վարչության
կապի բաժին Լուսինե Հակոբյան հեռ՝ 010 590065

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
## Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

N ՄԽ/22398-2024 «___»____________ 202__ թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Դավիթ Գասպարյանին

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

Ի պատասխան Ձեր 2023 թվականի օգոստոսի 1-ի N 07/11.1/10841-2024 գրության՝ հայտնում ենք, որ ըստ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվի տվյալների՝ Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Աբովյան փողոց 139 հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրությամբ նշված «ՓԱԲ ԲՈՒՆԿԵՐ» կազմակերպության անվամբ իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Աբովյան փողոց 139 հասցեով գրանցված է մեկից ավելի անշարժ գույքի միավոր՝

1) Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Աբովյան փողոց 139 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է քաղաքացի Լալա Ազատի Զաքարյանի (անձնագիր՝ AS0333656, ծնված՝ 09.07.1951 թ.) սեփականության իրավունքը (վկայական՝ 1373157, հիմք՝ 03.12.1977 թ. N 5013 առուվաճառքի պայմանագիր),
2) Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Աբովյան փողոց 139 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է քաղաքացիներ Արման Վահանի Պետրոսյանի (անձնագիր՝ 014839856, ծնված՝ 18.07.1980 թ.) և Աննա Սպարտակի Հովհաննիսյանի (անձնագիր՝ AF0348925, ծնված՝ 16.07.1984 թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը (վկայական՝ 2434492, հիմք՝ 01.03.2010 թ. N 1098 առուվաճառքի պայմանագիր),

3) Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Աբովյան փողոց 139 շենքի խանութ հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է քաղաքացի Կարեն Վահանի Պետրոսյանի (ՌԴ անձնագիր՝ 73 0738825, ծնված՝ 06.11.1975 թ.) սեփականության իրավունքը (վկայական՝ 2512093, հիմք՝ 14.07.2005 թ. N 961 նվիրատվության պայմանագիր):

X

Հարգանքով՝ Միեր Խաչատրյան

Կատարող՝ Շ. Մկրտչյան
Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն
Հեռ.՝ 060-474235

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

*«26» փետրվարի 2025թ.*

*No*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան 11.02.2025թ-ի թիվ 07/11.1/1084-2025 գրության

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

ՀՀ ՊԵԿ ՀՕՀՎ թիվ 14 Տարածքային բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է այցելություն Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան փ. 139 հասցե: Այցելության արդյունքում պարզվել է, որ նշված հասցեում «ԲՈՒՆԿԵՐ ՓԱԲ» ֆիրմային անվան ներքո գործունեություն է իրականացնում Ա/Ձ Արման Գևորգյանը (ՀՎՀՀ 57410846):

Invalid signature

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Կատարող՝ ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության տարածքային թիվ 14 բաժնի ավագ օպերլիազոր Գառնիկ Քամալյան*
*Հեռախոս՝ 060841069*

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

| Առաքանու հասցեատեր/ Addressee of the item | Արման Այվազի Գևորգյան (Փաբ Բունկեր) ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԱԲՈՎՅԱՆ Փ. 139 |
|---|---|

**A.R.** Ծառայողական/ On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/ On postal service

**Առաքանու բնույթը/Nature of the item**

| | | |
|---|---|---|
| ☐ Առաջնային նամակ/ Priority letter | ☐ Հրատարակչություն/ Printed paper | ☐ Ծանրոց/ Parcel |
| ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter | | |
| ☐ Պատվիրված/Registered | ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery | ☐ Գնահատված/ Insured |
| Առաքանու թիվը/ No of item LO127503676AM | | |
| ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order | | |
| ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order | ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque | |

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

| | |
|---|---|
| Անուն կամ գրասենյակի անվանում/ Name | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| Փողոց և թիվ/ Street and No | ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002 |
| Բնակավայր և երկիր/ Locality and country | Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ |
| | |

AL0127503676AM

**Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination**

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

☐ հանձնվել է/ delivered ☐ վճարվել է/ paid ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ՍՇ/34.2-Մ2-9/933-2025 պ/տ
Հավելյալ Նշում 2՝

Լրացվում է ստացողի կողմից/To be filled in by the receiver

powered by Envelope, envelope.haypost.am

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
ՍՇ/34.2-Մ2-9/933-2025 պ/տ

YEREVAN 0002 16 APR 2025 HayPost ARMENIA

120.

LO127503676A

ARMENIA GYUMRI 3104 26 MAY 2025 HayPost

| ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN | CN15 |
|---|---|
| ☑ Անհայտ/ Unknown | ☐ Մերժված/ Refused |
| ☐ Տեղափոխված/ Gone away | ☐ Չի պահանջվել/ Unclaimed |
| ☐ Թերի հասցե/ Insufficient address | ☐ |
| Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date | |

26-05 25թ

powered by Envelope, envelope.haypost.am

Արման Այվազի Գևորգյան (Փաբ Բու
Armenia ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԱԲՈՎՅԱՆ Փ

ARMENIA YEREVAN
2000
2 9 MAY 2025
ՀԱՅՓՈՍՏ

GYUMRI
3104
1 8 APR 2025
ՀԱՅՓՈՍՏ

ARMENIA YEREVAN
2000
2 9 MAY 2025
ՀԱՅՓՈՍՏ

GYUMRI
3104
1 8 APR 2025
ՀԱՅՓՈՍՏ